ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու հրավերով նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ: Բացակա էին՝ Արմեն Համիկյանը, Լադիկ Ղազարյանը, Հովհաննես Մաթոսյանը, Գեղամ Պետրոսյանը,Արամայիս Մքոյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Լիպարիտ Տիգրանյան, Մարիամ Ստամբոլցյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանը

Նիստը արձանագրում էր գլխավոր մասնագետ՝ Արա Ղանդիլյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը՝
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 147-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի հունվար-հուլիս ամիսներին զորացրված և 44-օրյա պատերազմի ժամանակ ռազմական գործողություններին մասնակցած թվով 50 զինծառայողների դրամական աջակցություն տրամադրելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի մարզիկին դրամական աջակցություն տրամադրելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերական,ընդերքօգտագործման եվ այլ արտադրական նշանակության եվ բնակավայրերի նշանակության հողերը աճուրդ-

վաճառքի միջոցով օտարելու, օտարման մեկնարկային գին եվ պայմաններ հաստատելու մասին
5.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող թվով 4 բնակարաններ վարձակալներին նվիրելու մասին
6.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու կողմից ուղերձ ընդունելու մասին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 147-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1.«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 2-ի:
2.«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման թիվ 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 3-ի:
3.«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման թիվ 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 6-ի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՀՈՐԱՑՐՎԱԾ ԵՎ 44-ՕՐՅԱ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԹՎՈՎ 50 ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021թվականի հունվար-հուլիս անիսներին զորացրված և 44-օրյա պատերազմի մասնակից թվով 50 զինծառայողների տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ընդամենը 1 000 000 /մեկ միլիոն / դրամ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի,18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 20-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի Բաժին 10 Խումբ 7 Դաս 1 «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» 4727 հոդվածով հատկացված գումարներից դրամական աջակցություն տրամադրել՝
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Այգաբաց գյուղի բնակիչ, բոնցկամարտի մեծահասակների Հայաստանի Հանրապետության առաջնության 1-ին մրցանակակիր Դավիթ Զալոյանին 50 000 /հիսուն հազար/ դրամ:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության և բնակավայրերի նշանակության հողերը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:
2. Հողամասերի օտարման մեկնարկային գին սահմանել տվյալ պահին գործող կադաստրային արժեքի չափով:
3. Արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության և բնակավայրերի նշանակության հողամասերի օտարման պայմաններն հաստատել համաձայն թիվ 1 հավելվածի:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակիչներ Սամվել Ավետիսյանի, Սուսաննա Մուրադյանի,Գոհար Չալոյանի և Հովիկ Վարոսյանի դիմումները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն համարվող նոր Ախուրյանի Յու. Ղամբարյան փողոց, 2-րդ անցում 3ա շենքի (հիմք՝ չափագրումների փաթեթ) թիվ 20 բնակարանը՝ 88.77 քառակուսի մետր մակերեսով և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով նվիրել Սամվել Հրաչի Ավետիսյան չորս անձից բաղկացած ընտանիքին՝

1)ինքը՝ Ավետիսյան Սամվել Պարետի - ծնված՝ 1959թ.

2) աղջիկը՝ Ավետիսյան Հերիքնազ Սամվելի - ծնված՝ 1988թ.

3)աղջիկը՝ Ավետիսյան Հերմինե Սամվելի- ծնված՝ 1989թ.

4) տղան՝ Ավետիսյան Հակոբ Սամվելի - ծնված՝ 1996թ.

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն համարվող Ջրաշինարարների բանավան, 3-րդ փողոց, 1/3 շենքի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 26122017-08-0040, տրված 26 դեկտեմբերի 2017 թվական) թիվ 12 բնակարանը՝ 66.27 քառակուսի մետր մակերեսով և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով նվիրել Հովիկ Ռոբերտի Վարոսյանի 4 չորս անձից բաղկացած ընտանիքին՝

1) ինքը՝ Վարոսյան Հովիկ Ռոբերտի- ծնված՝ 1984թ.

2) հայրը՝ Վարոսյան Ռոբերտ Պատվականի- ծնված՝ 1958թ

3) մայրը՝ Վարոսյան Սաթենիկ Բագրադի - ծնված՝ 1956թ.

4) քույրը՝ Վարոսյան Կարինե Ռոբերտի - ծնված՝ 1990թ.

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն համարվող Ջրաշինարարների բանավան, 3-րդ փողոց, 1/2 շենքի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 26122017-08-0039, տրված 26 դեկտեմբերի 2017 թվական) թիվ 15 բնակարանը՝ 53.46 քառակուսի մետր մակերեսով և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով նվիրել Սուսաննա Աբրահամի Մուրադյանի 4 /չորս/ անձից բաղկացած ընտանիքին՝
1) Մուրադյան Սուսաննա Աբրահամի - ծնված՝ 1952թ.
2) Մուրադյան Խաչատուր Վահանի - ծնված՝ 1974թ.
3) Մելիք-Սարգսյան Սիրանուշ Միշայի - ծնված՝ 1975թ.
4)Մուրադյան Սուսան Խաչատուրի - ծնված՝ 1999թ.

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն համարվող Ջրաշինարարների փողոց, 4-րդ անցում, 5-րդ շենքի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 18032021-08-0026, տրված 18 մարտի 2021 թվական) թիվ 9 բնակարանը՝ 152.94 քառակուսի մետր մակերեսով, նվիրել Գոհար Էլբակի Չալոյանի 3 /երեք/ անձից բաղկացած ընտանիքին՝
1) Չալոյան Գոհար Էլբակի - ծնված՝ 1967թ.
2) Հակոբյան Արմեն Սանասարի - ծնված՝ 1995թ.
3) Հակոբյան Արփինե Սանասարի - ծնված՝ 1994թ.

5.Բնակարանի նվիրատվության հետ կապված ծախսերի կատարումը վերապահել վարձակալին:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Քննարկելով համայնքների միավորման գործընթացը, այլ համայնքների հետ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի միավորման նպատակահարմարության հարցը, արտահայտելով համայնքի բնակչության դիրքորոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1.Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակչությանը ուղղված ուղերձ՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և ՀՀ Ազգային ժողովին ուղղված ուղերձ՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-7 Դեմ-2 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N·68/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.117 ՀԵԿՏԱՐ ԵՎ 0.119 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 5-րդ և 30 -րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը (N 1/փ-273)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի վարչական տարածքում գտնվող 08-007-0130-0010, 08-007-0130-0009 կադաստրային ծածկագրերով՝ համապատասխանաբար 0.117 հա և 0.119 հա մակերեսներով հողամասերը, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի ջերմատուն կառուցելու նպատակով, արտադրական նշանակության օբյեկտների, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի փոփոխությունը:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.09899 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 5-րդ պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը (N 1/փ-271)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում գտնվող 08-007-0980-0048, կադաստրային ծածկագրով 0.09899 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը՝ ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու նպատակով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողի փոփոխությունը:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70/

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ

Գ. ԲԱԲՈՒՋՅԱՆ

Ժ. ԳԱԲՈՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Վ. ԷԼԲԱԿՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արա Ղանդիլյանը

17 սեպտեմբերի 2021թվական
գյուղ Ախուրյան